ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

<<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>>

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՄԱՄՆԱԳԻՐ

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ **023101.00.6 «Հայոց լեզու և գրականություն»**

դասիչ, անվանում

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ **Բանասիրության բակալավր**

անվանում

Վանաձոր

2023

1. **Ծրագրի անվանումը**

«Հայոց լեզու և գրականություն»

2.1. ՈԱՇ-ի մակարդակ

Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ

2.2. Որակավորման աստիճան

Բանասիրության բակալավր

2.3. Կրեդիտների քանակը

240

3. **Բուհ**

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

4. **Ֆակուլտետ**

Հումանիտար գիտությունների

5. **Ամբիոն**

Հայոց լեզվի և գրականության

6. **Ուսուցման լեզու**

Գրական հայերեն

7. **Ուսուցման ձևը**

Առկա, հեռակա

8. **Արտոնագրում**

Արտոնագրված է ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից (Լիցենզիա N 0025, 2018թ.),
մասնագիտության ծածկագիրն է՝ **023101.00.6 :**

9. **ԿԾ-ի մուտքի պայմաններ**

Բանասիրության բակալավր «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կրթության վկայական և հաջողությամբ հանձնած լինի «Հայոց լեզու և գրականություն» (գրավոր), «Օտար լեզու» (գրավոր) միասնական ընդունելության քննություններ:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագրությունը

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում չորս տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 240 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ): Ծրագիրը նախատեսում է ուսանողի կիսամյակային 20-շաբաթյա բեռնվածություն, որից 4-ը՝ քննական:

Բակալավրական ՀԿԾ-ի ուսուցման նորմատիվային ժամկետը հեռակա ուսուցման համակարգում հինգ տարի է՝ տարեկան 48 կրեդիտ հաշվարկով (յուրաքանչյուր կիսամյակում՝ 24 կրեդիտ), որոնց հանրագումարը 5 տարվա ընթացքում նույնպես կազմում է 240 կրեդիտ:

11. Ծրագրի նպատակը

Ծրագիրը նպատակաուղղված է բանասիրության, մասնավորապես՝ հայոց լեզվի և գրականության բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ գիտության, կրթության, ինչպես նաև հասարակական կյանքի այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:

12. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

023101.00.6 - «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բանասիրության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է

Գիտենա՝

1. Լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, առաջադեմ տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:
2. Մանկավարժական, հոգեբանական և մեթոդական նորմերը, դաստիարակության և ուսուցման ժամանակակից հնարները:

Կարողանա՝

1. Կիրառել ոլորտի հիմարար սկզբունքները և մեթոդները՝ ծանոթ իրադրություններում խնդիրների լուծման համար, որոնք բնորոշ են մասնագիտական բնագավառին:
2. Դրսևորել վերլուծելու և եզրահանգումներ անելու ունակություն, ինչպես նաև որոշակի ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար:
3. Բացատրել և հանրությանը ներկայացնել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստարկներ:

Տիրապետի՝

1. Մասնագիտական գործունեություն ծավալելու և առաջադրանքներ կատարելու, սահմանափակ ինքնուրույնության պայմաններում որոշումներ կայացնելու հմտություններին,
2. Հետագա ուսումնառությունը ֆորմալ և ոչ ֆորմալ միջավայրերում ինքնուրույն շարունակելու հմտություններին:
3. Կրթության և դաստիարակության ժամանակակից մեթոդներին, ՏՀՏ հմտություններին:

13. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են.

ա) դասախոսություններ,

բ) գործնական պարապմունքներ, սեմինարներ,

գ) ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, գործնական խաղեր),

դ) ուսումնական և արտադրական պրակտիկաներ:

14. Գնահատման սկզբունքները և մեթոդաբանությունը

ՎՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:

Բակալավրիատի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100-միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:

Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան,
- ինքնուրույն կատարվող աշխատանքներ,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն,
- նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները,
- ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:

15. Մասնագիտական գործունեության ոլորտներ

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

1. գիտահետազոտական հիմնարկություններում՝ բանասեր, կրտսեր գիտաշխատող,
2. հանրակրթական դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ,
3. մեթոդիստ,
4. լրագրող, սրբագրիչ,
5. հայոց լեզվի և գրական խմբակների ղեկավար:

16. Հետագա ուսման հնարավորությունները

«Հայոց լեզվի և գրականության» մասնագիտությամբ բանասիրության բակալավրի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- բակալավրի որակավորման աստիճան ԿԾ-ով՝ 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու բանասիրության մագիստրոսի աստիճան,
- մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան:

17. Դասավանդողին ներկայացվող պահանջները

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները,
- մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ։

Հետազոտական

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ։

Հաղորդակցման

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցեսը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը։

ՏՀՏ կիրառության

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ։

2. Մասնագիտական կարողություններ

Դասավանդողը պետք է ունակ լինի՝

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ գիտական գործունեությանը

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:
- Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ: